Պարույր Սևակ

Ոսկին վերստին ոսկի է մնում

Շրթերիս վրա խոսքեր են դողում՝
Խոսքեր արտառո՛ց,
Իմաստազրկվա՛ծ,
Հնացա՛ծ խոսքեր.
Հին-հին գրքերի, մատյանների մեջ,
Բառարաններո՛ւմ մնացած խոսքեր:
Ուզում եմ ասել.
-Գթասի՛րտ եղեք,
Եղեք ողորմա՛ծ,
Մարդու նկատմամբ մա՛րդ եղեք, մարդի՛կ:
Ու երբ չգործած մեղքերի համար
Մարդը հայցում է մեղքի թողություն
Ու ներողություն՝
Ոչնչի՛ համար,-
Գոնե գթասիրտ-ողորմած եղեք,
Անսրտության մեջ մի՛ եղեք համառ...
Շրթերիս վրա խոսքեր են դողում՝
Խոսքեր արտառո՛ց,
Իմաստազրկվա՛ծ,
Հնացա՛ծ խոսքեր.
Հին-հին գրքերի, մատյանների մեջ,

Բառարաններո՛ւմ մնացած խոսքեր:
Հնացա՛ծ խոսքեր,
Հնացա՛ծ,
Ինչպես ոսկին է հիմա,
Որով առ ու ծախ արդեն չեն անում,
Սակայն դրանից ոսկին ո՛չ մի տեղ
Երբեք չի դարձել ժանգոտած թիթեղ.
Ոսկին վերըստին ոսկի՛ է մնում...

01.IX.1958թ.
Մոսկվա